

Խորոնկա Ա.

ՀՀ ԳԱՄ պատմության ինստիտուտ

Ասորիները Արևելքի այն հնագույն ժողովուրդներից են, որոնց մայրնիները կանգնած են եղել վաղնջական քաղաքակրթության ակունքներում, մեծ նպաստ են բերել համաշխարհային մշակույթի զարգացման գործին: Ասորական պետության անկումից (605 թ. մ.թ.ա.) անցել է ավելի քան 2500 տարի: Ասորիների ժառանգները, շարունակելով ապրել իրենց պատմական հայրենիքում՝ Պարսից ծոցի, Միջերկրական ծովի, Ուրմիայի միջև ընկած տարածքի ընդգրկող հնագույն Բեյրութի (1), հաջորդաբար հայտնվել են պարսիկների, ալաքների, մոնղոլների, օսմանյան թուրքերի ու քրեղի կողմից: Այդ բազմաչափ արժեքավոր ժողովուրդն այսօր ծխաբլի է Իրաքի, Իրանի, Թուրքիայի և Միջրիայի սահմաններում՝ Կերին Միջագետքի անհյուսիսային ու սահմանափակ մի տարածքի վրա:

Хосроева А. Историческая справка об ассирийцах и о геноциде, совершенном над ними в Османской империи. Ассирийцы – один из древнейших народов мира, внесший немалый вклад в развитие мировой культуры. Более двух с половиной тысячелетий прошло после падения ассирийского царства (605г. до н.э.). С тех пор потомки уцелевшего населения – вечные скитальцы, гонимые, преследуемые и эксплуатируемые многочисленными властителями Западной Азии, от древнеперсидских царей и византийских императоров до турецких султанов и английских империалистов. Во время и после Первой мировой войны вовлеченный помимо своей воли в мировую войну, ассирийский народ превратился в разменную монету в руках противоборствующих сил и в итоге стал жертвой империалистических интриг и шовинистических акций, осуществляющихся младотурецкими заправилками, иранскими феодалами, царскими генералами, английскими колонизаторами и реакционной верхушкой королевского Ирака.

Khosroyeva A. Historical Resume about Assyrians and Their Genocide in Ottoman Empire. Assyrians are one of the oldest people of the world made great contribution in the development of world culture. It was about two and half thousand years ago after the fall of Assyrian reign / 605 before Christ/. Since that day the descendants of that surviving population had been perpetual wanderers chasing by many sovereigns of Western Asia beginning from old Persian kings, Byzantine emperors till Turkish sultans and English imperialists. During I World War the Assyrians involving in it had become change in hands of hostile forces and as a result they were victims of imperialistic intrigues and chauvinistic actions realizing by young Turkish leaders, Iranian feudal lords, royal generals, English colonialists and Iraq's royal reactionary leaders.

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ ասորական գյուղեր կային օսմանյան Թուրքիայի Վանի վիլայեթի Հաքյարի և այլ սանջակներում, ինչպես և Էրզրումի, Դիարբեքի մահանգների տարածքներում, Իրանի Ուրմիայի և Իրաքի Մոսուլի շրջաններում: Այստեղ ապրում էր 2 մլն-ից ավելի ասորի՝ միասնական լեզվով, մշակույթով, ազգային սովորույթներով: Ասորիները բաժանված էին սոցիալական և կրոնական հատկանիշներով: Կրոնապես բաժանված էին նեստորականների, կաթոլիկների, բողոքականների, իսկ սոցիալապես՝ երկու մեծ կաստաների՝ աշիրեթների (ինքնուրույն գեղայինքեր) և ուսյաների (ենթակա ժողովուրդ): Նրանք հիմնականում զբաղվում էին հողագործությամբ և անասնապահությամբ: XX դ. սկզբին Թուրքիայի և Իրանի սառնիները քաղաքական, ռազմական և հոգևոր առումով ենթարկվում էին պատերազմի Մար-Շիմոն Բենիամինին:

Դարասկզբին Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունները հույսեր էին կապում երիտթուրքերի հետ: Նրանք անհամբեր սպասում էին խոստացված ազատություններին: Սակայն դրա փոխարեն կամ ենթարկվեցին ֆիզիկական ոչնչացման, կամ բռնի կրոնափոխման: Երիտթուրքերի կոսակցության ծրագրում զբաղված էր. «Ուշ թե շուտ բոլոր թուրքահպատակ ժողովուրդները պետք է թուրքացվեն: Պարզ է, որ դա չի կարող տեղի ունենալ իրենց կամքի համաձայն, և մենք ստիպված ենք զենք կիրառել» [2]: Երիտթուրքական գաղափարախոս ղեկավար Նազմը գաղտնի մի խորհրդակցության ժամանակ ասել է. «Չարդն անհրաժեշտ է: Բոլոր ոչ թուրքական տարրերը, որ ազգին էլ նրանք պատկանելիս լինեն, պետք է ոչնչացվեն» [3]: Անգլիացի Ռ. Մուաֆ-ֆորդը ճշմարտացիորեն նկատում է. «Մեծ առաջընթաց կլիներ թուրքերի համար, եթե նրանք կարողանային ցույց տալ, որ անկախ այն հանգամանքից, թե ինչ տեղի ունեցավ հայերի հետ, Թուրքիայի մեկ այլ քրիստոնեական համայնք (նկատի են առնվում ասորիները), լիովին գոհ է իր ճակատագրից» [4]: Իսկ ինչպիսին էր՝ նրանց ճակատագիրը:

Ակադեմիկոս Ե. Տարին նշում է. «Երիտթուրքերը 1915թ. ոչ միայն ոչնչացրեցին հայ ազգի մեծամասնությունը և հպարտանում էին դրանով, այլ դեռ 1908թ. գարլով իշխանության՝ ունեին հստակ ծրագիր, որի հիմքում ընկած էր բնաջնջման քաղաքականությունը: Այս միջոցով էին նրանք ուզում պահպանել միասնական Թուրքիան բաժանումից» [5]:

Դեռ 1895-1896թթ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած կոտորածների հետևանքով զոհ գնացին 300 հազ. հայեր և 55 հազ. ասորիներ: 100 հազ. մարդ (245 գյուղեր) մահադակահարվեց, 100 հազ. կանայք և աղջիկներ թշվառեցին թուրքական հարեմներ: Փաստերը վկայում են, որ դեռ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ռուսական հրամանատարությունը դիմել է Մար-Շիմոն Բենիամինին օգնության խնդրանքով, ի պատասխան որի վերջինս Վանում ռուսական հյուպատոս Տերմենին խոստացել էր 40 հազ. զորք [6]: Մա առթի դարձավ թուրքերի համար ոչնչացնելու 98 գյուղեր [7]: 1919-23թթ. Մուստաֆա Զեմալի կողմից սպանվեցին 75 հազ. հույներ, մոտ 300 հազ. ասորիներ, միայն նրա համար, որ քրիստոնյա էին [8]:

Թուրքերը ազգամիջյան կռիվներ էին հրահրում մի կողմից քրեղերի, իսկ մյուս կողմից՝ հայերի և ասորիների միջև: Դա մի կողմից ձեռնառու էր թուրքերին այն բանի համար, որ այս փոքր ազգերը միայնակ հետ պատերազմելով՝ թուլանում էին, իսկ մյուս կողմից՝ արդեն ուշադրությունը շեղվում էր հակաթուրքական ելույթներից: Իսկ թուրքերը այս պայմաններում կարող էին իրենց կամքը թելադրել հպատակ ազգերին:

1914թ. հոկտեմբերի 3-ին Ուրմիայում Ռուսաստանի փոխհյուպատոս Վեյնմանի տեղի մահանգապետի հետ այցելեց քրեղերի և թուրքերի կողմից ավերված ասորական Անգար, Ալվալ և այլ գյուղեր: «Ամենուրեք, - գրում էր նա, - ավերակներ էին»: Անգարում նա տեսավ ասորիների հրկիզված դիակներ, քանդված և այրված

տներ: «Մտաւկա գյուղերի հրդեհը շարունակվում էր: Ասորիների ընտանիքները հավաքվել էին քաղաքի մտաւկա արտերում», - շարունակում էր Վեդենսկին [9]:

Թուրքական իշխանությունները լուրեր էին տարածում, թե իբր Ռուսաստանը ասորիներին զինում է ընդդէմ քրդերի [9]: Այդպես քրդերին թուրքերը տրամադրում էին ասորիների դեմ: Այս բարբարոսական գործողությունները երիտթուրքերն իրագործում էին գերմանական իշխանությունների օժանդակությամբ: Իր 1914թ. հոկտեմբերի 24-ի հեռագրում Վեդենսկին հաղորդում էր. «Փախտաւկանների հոսքը շարունակվում է: Շշուկներ են տարածվում տեղի ունենալիք նոր սպանդի մասին»: Մեկ օր հետո նա նշում էր, որ Թուրքիայից Իրան են փախել ավելի քան 600 փախտաւկան ասորիներ [11]: Միայն 1914թ. սեպտեմբերին հրդեհվեց ավելի քան 30 հայկական և ասորական գյուղ: «Հրդեհները ուղեկցվում էին դաժանությամբ», - գրում էր «Քարտ» թերթը: «Միայն Քանաչար ասորական գյուղում կենդանի հրկիզվեց 200 մարդ» [12]:

Առաջին աշխարհամարտի օրերին հայերի նման ասորիներն էլ ենթարկվում են բռնագաղթի ու կոտորածների: Ցավոք ասորիների ջարդերը իրականացվեցին նաև չեզոք երկիր համարվող Իրանում:

1915թ. ռուսական զորքերի հաջողությունները հարավում երիտթուրքերին սղում են «խանգարող» ոչ թուրք բնակչությունից ազատվելու քայլերի: Տեղի են ունենում հայերի ու ասորիների կոտորածներ Դիարբեքիում, Բիթլիսում, Ուրֆայում, Ադանայում և այլուր:

1919թ. «Ֆրանսիական Ասիա» պարբերականը նշում էր, որ ասորիների կոտորածը հիշեցնում է հայկական ջարդերը: Եվ քանի որ 250 հազ. մահատակներ ունեցած այս ժողովրդի մասին ավելի քիչ է խոսվել, պետք է այդ մասին հայտնել աշխարհին [13]:

Դիարբեքիի կաթոլիկ քահանա արքեպիսկոպոս Ժոզեֆ Նայենը վկայում էր, որ 1915թ. ապրիլի 8-ից սկսած անավոր ջարդեր են տեղի ունեցել. 16 տարեկանից բարձր տղամարդկանց հավաքում էին, ծեծում, խոշտանգում, սպանում, ապա փաթեթներ հագցնում գլուխներին ու նկարում, որ հետո ապացուցեն աշխարհին, թե իբր քրիստոնյաները հալածել են մուսուլմաններին [14]: Վանի մահաճգապետ Ջևդեղ Բեյը, որն ուներ 8 հազ. «մսագործների գունդ», իր «գործն» էր անում [15]:

Կոտորածներից համեմատաբար զերծ մնացին միայն Թուրքիայի հարավ-արևելքում, Իրանի սահմանակցությամբ գտնվող Հաքյարի լեռնային շրջանի ասորիներն ու հայերը: XIX դարի վերջին և XX դարի սկզբին այստեղ կար 300 հազ. բնակչություն, որից՝ 100 հազ. ասորիներ, 15 հազ.՝ հայ:

1915թ. հունվարի 2-3-ը ռուսական զորքերի հետ միասին Ռուսաստանի տարածք գաղթեցին 25 հազ. ասորիներ [17]: «Ժամ ուշադրությունը գրավեց մի մերժված ժողովրդի ողբերգական գաղթի ճակատագրի պատկերը: Ես խոսում եմ ասորիների մասին», - վկայում էր մի անգլիացի ակամատես [18]: 750 մարդ գլխատվեց ասորական Հավթևան գյուղում [19]: 5000 ասորուհիներ հայտնվեցին քրդական հարեմներում [20]: 1915թ. հունվարին ոստիկանական մի ջոկատ Քաչալի խանի գլխավորությամբ շրջապատեց ասորական Գուլիաշան գյուղը և քառուրանդ արեց այն [21]: Դիվանի գրավումից հետո մտաւկա 20 ասորական գյուղերի բնակիչներ սրի քաշվեցին [22]: Միակ երբևէ գաղթն էր: 15 հազ. ասորիներ բռնեցին Ռուսաստանի ուղին, 40 հազ.՝ հասան Թավրիզ [23]:

1917թ. դեկտեմբերին Ուրմիայում ժողով է գումարվում Անտանտի ներկայացուցիչների և Ադա Պետրոսի մասնակցությամբ, որի ժամանակ ասորիներին խոստանում են տալ զենք, զինամթերք, գումար՝ ասորական ինքնավարություն ստեղծելու նպատակով: 1918թ. մարտին որոշվում է քրդերի հետ ընդհանուր հայտարարի գալ՝ միատեղ գործելու համար: Սակայն քրդերի առաջնորդ Ադա Մեմլուն մարտի 1-ին իր ամբողջ և հրավիրում 40-50 հոգանոց ասորական պատվիրակությանը և նրանց զգույն ծողակը: Այս ամենի մասին պատմում է փրկված մի ռուս սպա՝ Կոնդրատովը [24]: Ադա Պետրոսը որոշում է վրեժխնդիր լինել և 7 հազ. լեռնցիներով պաշարում է ամբողջ: Ադա Մեմլուն փախչում է և իր վրեժը լուծում Խոյում ապրող 3800 հայ և ասորի կանանցից ու երեխաներից [25]: Պայքարը թուրքական, իրանական, քրդական ուժերի դեմ նոր թափ է ստանում: 1918թ. հունիսի 18-ից սկսած Ուրմիայի պաշարումը տևում է երկու ամիս: Անտանտի խոստացված օգնությունը պաշարյալներին տեղ չի հասնում: 100 հազ. մարդու փրկվում է 80 հազ. [26]: Ուրմիայից սկսվում է տանջալից փախուստ դեպի Միջագետք, որն ուղեկցվում է մարդկային ծանր կորուստներով: Անգլիացի կապիտան Մակկարդին այս կապակցությամբ նշել է. «Մենք պարտավոր էինք մեր խոստումները կատարել ասորի ժողովրդի հանդեպ, որը մեր կողքին էր, երբ մենք օգնության խիստ կարիք ունեինք: Անգլիայի նկատմամբ իր ազնվության համար նա այսօր շատ քանկ է վճարում: Ես երբեք չեմ մոռանա այն, ինչ տեսել եմ նրանք այդ արտոյի ճանապարհին» [27]:

1918թ. ամռանը Իրանում ասորիների համար վիճակը դարձավ անտանելի. շոգի, սովի ու համաճարակների հետևանքով ասորի փախտաւկանների թիվը շեշտակի նվազեց: Ողջ մնացած գաղթականների մնացյալ մասը հասավ Համադան, որտեղ նրանց սպասում էր անգլիացիների անհյուրընկալ վերաբերմունքը: Նրանց սկսեցին ներգրավել անգլիական բանակի մեջ՝ «ասորական լեվիաներ» անվան տակ: Վերջիններս 1919թ. Միջագետքում մասնակցեցին արաբական և քրդական զանազան հակամարտությունների խռովությունների ճշմամբ:

Օտանյան կայսրության անկումը ինքնավարություն ստանալու հույսեր արթնացրեց ասորիների շրջանում: 1919թ. Փարիզի խաղաղության կոնֆերանսին մասնակցում էին մի քանի ասորական պատվիրակություններ: Նրանց մեջ ամենակատիվը փաստաբաններ Մայիլ Անտուան Նամեկի, Ռուստեմ Նեջիբի և դոկտոր Ժան Ջեբուրիի գլխավորած պատվիրակությունն էր, որը ժամանել էր Կոստանդնուպոլսից: Վերջիններս հանդես եկան նախ ինքնավար, ապա անկախ պետություն ստեղծելու գաղափարով: Ըստ այդ ծրագրի ինքնավար պետության մեջ պետք է մտնեին Դիարբեքիի, Մաուլի վիլայեթները, Ուրֆան, Էրեզորը, Բիթլիսի վիլայեթի Սիերտ սանջակը, Ալեքսանդրետի նավահանգիստը Միջերկրական ծովում և Շաղ էլ Արաբը՝ Պարսից ծոցում: Սակայն այդ իդեերի փոխարեն Սերտի դաշնագիրը ասորիներին տվեց միայն «պաշտպանության երաշխիք», այն էլ հետագայում ավտոմոտ Քրդստան ստեղծելու դեպքում:

1923թ. Լոզանի կոնֆերանսում վերջ տրվեց բոլոր պատրանքներին: Այստեղ ասորական հարցն անգամ չլսվեց: Հենց կոնֆերանսի օրերին թուրքական իշխանությունները 20 հազ. ասորիների Թուրքիայի տարածքից

վտարեցին դեպի Իրաքի սահմանները, այսպես կոչված բրյուսելյան գիծ: Ազգերի լիգան ևս ոչ մի քայլ չձեռնարկեց ասորական խնդրի լուծման, այդ ժողովրդին որևէ օգնություն ցուցաբերելու ուղղությամբ: Դեռ ավելին. 1925թ. դեկտեմբերի 26-ին Ազգերի լիգան Հաքյարին համձնում է Թուրքիային, իսկ Մոսուլը՝ Իրաքին՝ ի չիք դարձնելով ասորական ավտոնոմիայի հույսերը: Ասորի ժողովուրդը դարձավ օտարական իր իսկ հողի վրա: 1925թ. դեկտեմբերի 16-ի տխրահռչակ որոշումը ստիպեց ասորիներին Իրաքում բնակվել բրիտանական հովանու ներքո: Ելանքն այստեղ անուանելի էր: 1929թ. պատրիարք Մար-Շիմուն 23-րդի (1920-1975) վկայությամբ 3 տարվա ընթացքում այստեղ կատարվել է 79 անպատիժ սպանություն: 1932թ. բրիտանական «հովանավորչության» ժամկետը լրացավ. 70 հազ. ասորիներ խնդրանքով դիմեցին իրենց բնակավայրերում հողակտորներ ստանալու համար: Մակայն Բաղդադը թշնամաբար ընդունեց «Երախտամոռ» ասորիների այդ բնական ու համեստ պահանջը և ուժեղացրեց իր ճնշումները: Այս ամենը անհետևանք չմնաց: 1933թ. օգոստոսին, երբ 1000 հոգի փորձում են Միդիա՝ ֆրանսիական պրոտեկտորատի գոտի տեղափոխել իրենց ընտանիքները, Տիգրիս գետի ափին իրաքյան իշխանությունները զենք են գործադրում նրանց նկատմամբ: Ասորիները պատասխան քայլերի են դիմում և հաջողությամբ անցնում Միդիա: Իրաքյան բանակը այս պարտության վրեժը լուծում է ասորական գյուղերի խաղաղ բնակչությունից: Միայն Մեմեդ գյուղում զոհվում է 3000 մարդ: Մեմեդի եկեղեցում հայտնաբերվում են ողջակիզված երեխաների բազմաթիվ դիակներ: Այս ջարդերն արժանանում են իրաքյան կառավարության հավանությանը, իսկ կազմակերպողը ստանում է զենեքալի կոչում [28]:

1933թ. հուլիսի 18-ին Մար-Շիմունը Իրաքում համարվեց անցանկալի անձնավորություն և ստիպված մեկնեց Կիպրոս: Եւ իր ծայրը բարձրացրեց բրիտանական անտարբերության դեմ: Այս դեպքերի մասին վկայող իրաքյան արխիվները փակվեցին թագավոր Ֆայսալ I-ի մահից հետո: 1933թ. ողբերգական դեպքերը պատճառ հանդիսացան, որ ասորիները ցրվեն աշխարհով մեկ. սկզբում՝ սահմանակից երկրներ, ապա՝ Եվրոպա, Ամերիկա, Ավստրալիա:

1945թ. մայիսի 7-ին ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը ելույթ ունենալով ՍԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, փորձեց ստանալ մեծ տեղությունների աջակցությունը՝ իր ժողովրդի դատը պաշտպանելու խնդրում, սակայն՝ սպարդյուն [29]:

Խուստիեղով Սադդամ Հուսեյնի վարչակարգի կողմից իսլամական ֆունդամենտալիզմի պարտադրանքներից և օգտվելով 1990թ. գարնանը Իրաքի սահմանների բացվելուց, մեծ թվով ասորիներ անցան այլ երկրներ: Այսօր աշխարհով մեկ սփռված ասորի ժողովուրդը շարունակում է իր դարավոր և արդար պայքարը: Սկսած 1991թ. ապրիլից ծավալվում է ասորական դեմոկրատական շարժում՝ «Զալխա» անունով, որն իր մեջ ներառում էր 35 հազ. անդամ:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում օսմանյան Թուրքիայիում և նրան հարակից տարածքներում, ուր ապրում էր մոտ 2 մլն ասորի [30], միջազգային իրավունքի չափանիշներով տեղի է ունեցել իսկական ցեղասպանություն: Այդ խնդիրն առ այսօր դուրս է մնացել համաշխարհային հասարակայնության ուշադրությունից: Այդ ուղղությամբ անհրաժեշտ են լուրջ գիտական ուսումնասիրություններ և լայն քաղաքական բննարկումներ տարբեր երկրների պաշտոնական շրջանակներում՝ ի պաշտպանություն բազմաչարչար ասորի ժողովրդի և ի նպաստ պատմական արդարության վերականգնման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] Всемирная история, т. I. - М., 1957, с. 557.
 [2] Lepsius Bericht Über die Lage des Armenischer Volkes in Turkei, Potsdam, 1916, S. 220.
 [3] "Атра", N 4. - С.-Пб., 1992, с. 71.
 [4] Stafford R.S. The tragedy of the assyrians. - London, 1935, p. 27.
 [5] Тарле Е.В. Европа в эпоху империализма (2-ое изд.). - М. -Л., 1929, с. 182-183.
 [6] Думбис М. Айсори. - "Новый Восток", 1923, N3, с. 69.
 [7] "Атра", N4. - С.-Пб., 1992, с. 72.
 [8] Там же, с. 71.
 [9] Саргисов Л.М. Ассирийцы стран Ближнего и Среднего Востока. - Ер., 1979, с. 25.
 [10] Там же, с. 25.
 [11] Там же, с. 25.
 [12] Там же, с. 26.
 [13] Alichoran J. Du g'encocide a' la diaspora: les Assyro-chaldeens au XX sie'cle, Paris, 1994, p. 370
 [14] Там же, с. 370.
 [15] Там же, с. 372.
 [16] Там же, с. 374.
 [17] Johannan A. The death of Nation. - New-York - London, 1961, p. 120.
 [18] Матвеев К.П. (Бар-Маттай), Мар-Юханна И.И. Ассирийский вопрос во время и после первой мировой войны. - М., 1968, с. 49.
 [19] Johannan A. The death of Nation. - New-York - London, 1961, p. 127, 134.
 [20] Там же, p. 127, 128.
 [21] Матвеев К.П. (Бар-Маттай), Мар-Юханна И.И. Ассирийский вопрос во время и после первой мировой войны. - М., 1968, с. 51.
 [22] "Атра", N4. - С.-Пб., 1992, с. 72.
 [23] Там же, с. 73.
 [24] Alichoran J. Du g'encocide a' la diaspora: les Assyro-chaldeens au XX sie'cle, Paris, 1994, p. 379.
 [25] Там же, p. 380.
 [26] Там же, p. 382.
 [27] Там же, p. 382.
 [28] Там же, p. 389.
 [29] Там же, p. 392.
 [30] Саргисов Л.М. Ассирийцы стран Ближнего и Среднего Востока. Ер., 1979, с. 4.